

ՊԱՐԱԲԱՂԾ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՎԱՐՉԱՔԱԴԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՔՍՏՈՒՄ 1813-1917 թթ.*

ՆԵԼԻ Բաղդասարյան

Բանակի բառեր՝ Ղարաբաղ, Գյուլիստանի պայմանագիր, Շուշի, Ա. Երմոլով, Վ. Մադարով,
Անդրկովկաս, Կասպիական մարզ, Շամախիի նահանգ, Բաքվի նահանգ, Ելիզավետպոլի նա-
հանգ, Վարչաքաղաքականություն:

1813-1917 թթ. Ղարաբաղը գտնվում էր ռուսական կայսրության տիրապետության
տակ: Ինքնակալության՝ Ղարաբաղի նկատմամբ իրականացված վարչաքաղաքակա-
նության լուսարամումը խիստ կարևոր և էական է՝ ինչպես հետպայմանային ժամանա-
կաշրջանը գնահատելու, այնպես էլ պատմական պատգամների իմաստով: Ղարաբաղն
առանձին վարչաքաղաքական և իրավասուրբեկության միավորի կարգավիճակով 1804-
1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքում Պարսկաստանի տիրապետութ-
յունից անցավ Ռուսաստանին. ինչպես ներկայիս Ադրբեյջանը կազմող տարածքները,
Դաղստանը և Վրաստանը: Ցարիզմի վարչական քաղաքականության արդյունքում
ստեղծվում է բոլորովին այլ իրավիճակ ինչը, մանրամասն քննության է ենթարկվել
ստորև [1]:

Ներևս 1805 թ. մայիսի 14-ի Քյուրակչայի դաշնագիրը՝ Ղարաբաղի խանության
գրավման առիթով առանձին դաշնագրի առկայությունը, անժմտելի վկայությունն է այն
փաստի, որ Ղարաբաղը տարածաշրջանում ընկալվել է որպես ինքնատիպ էրնուտա-
րաֆրային միավոր: Ինչ վերաբերում է պատմական հայստանի իրադարձությունների արդ-
յունքում Ղարաբաղում հաստատված խանական կարգին, ապա այն, ըստ էության, չի
արտացոլել հայաբնակ Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը և պարզապես պայ-
մանավորված է եղել մահմեդական պետության կազմում լինելու հանգամանքով: 1813
թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի՝ Ռուսաստանին միաց-
ման պահին Ղարաբաղի խանությունը [2] բաժանված էր մահապների, դրանք էին՝ Սիսիա-
նի, Կապանի, Դեմուշհասանլիի, Բաղաբերդի, Քյարիլովի, Բարգուշատի, Տաթևի, Զի-
վանշիրի, Ջրաբերդի, Խուրդափարայի, Փիսիանի, Օթուզ-Իրի, Իգիրմիդորդի, Կարա-
չորլուի, Վարանդայի, Դիզակի, Ազնանի, Թալիշի, Խաչենի, Սեղրի, որոնց գլուխ կանգ-
նած էին կամ հայ մելիքները, կամ թաթար բեկերը [3]: Փաստորեն, նման վարչաքաղա-
քական բաժանման, նրա կարգավորման, վերակազմակերպման հետ պետք է հարա-
բերվեր ցարական կառավարությունը հետագա մի քանի տասնամյակների ընթացքում:

1822 թ. Ղարաբաղի խանության վերացումն ուղեկցվեց նրա կառավարման համա-
կարգի վերակազմակերմամբ: Խանական կարգը վերացվել էր 1822 թ. նոյեմբերին, իսկ
1823 թ. վերջից ցարական կառավարությունը ծերնամուխ եղավ ինչպես միացված այլ
տարածքներում, այնպես էլ Ղարաբաղում ռուսական վարչակարող՝ օրենսդրություն, կա-
ռավարման տնտեսական և քաղաքական համակարգ մտցնելու գործին:

1823 թ. դեկտեմբերի 8-ին նախարարների խորհուրդը պետական դեպարտամեն-
տի ներկայացմամբ հաստատում է Ա. Երմոլովի ներկայացրած առաջարկը՝ ստեղծելու
ռազմական շրջան՝ կազմված Շաքի, Շիրվանի և Ղարաբաղի գավառներից [4] (արովին-

* Հոդվածն ընդունվել է 15.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՍՍՀ պատմության ամբիոնը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ցիա): Այդ մասին որոշումը ցարի կողմից հաստատվում է 1824 թ. հունվարի 22-ին: Որոշման համաձայն՝ գավառային կառավարումը կենտրոնացվում է բերդաքաղաքներում՝ պարետների ծեռքում: Պարետներին պետք է ենթարկվերին մահալների ղեկավարները՝ նայիրները, բեկերն ու մելիքները, որոնք իրականացնում էին ոստիկանական իշխանությունը, հսկում հարկահավաքությունը և պարհակների կատարությունը[5]: Ղարաբաղի պարետն ամփոփականորեն վերահսկում էր գավառի ֆինանսական գործընթացը: Պարետը չէր կարող ինքնուրույն նշանակել մահալների նայիրներին: 1824 թ. մարտ ամսից նայիրի թեկնածության հաստատումը, ռազմական շրջանի հրամանատարի ներկայացմամբ, վերահստատվում էր Վրաստանի կառավարչապետի կողմից[6]: Փաստորեն, ժառանգությունը ստանալով խաների իրավունքները՝ պարետներն ինքնուրույն չեն իրենց գործողություններում:

Ըստ որոշման՝ ռազմական շրջանի կենտրոնը Շուշի քաղաքն էր: 1823 թ. «Անդրկովկասի կառավարման կազմակերպման» մասին ցարական հրամանագրից հետո Երմղովը որոշում ընդունեց ստեղծել «Շուշի ամրոցի և նրա շրջանի քաղաքային դատարան»: Քաղաքային դատարանի՝ դիվանի կազմում կային 4 ատենակալներ՝ 2 բեկ և երկու քաղաքացի՝ հայ և թաթար: Նրանք նշանակվում էին պաշտոնավարման մեկ տարի ժամկետով[8]:

Շուտով իրականացվում է նաև տեղական ինքնակառավարման կազմակերպման գործը: 1824 թ. նայիսի 5-ի Սենատի հրամանագրով հաստատվում են Շաքի, Շիրվանի և Ղարաբաղի գավառների հաստիքները և ռազմական շրջանի պետի պաշտոնը: Պազմական շրջանի պետ է նշանակվում Վ. Սադարովը: Սկզբնապես Վ. Սադարովը կարծում էր, թե ինքը միանձնյա պետք է վարեր ռազմական, դիվանագիտական, քաղաքացիական և տնտեսական հարցերը: Սակայն հետագայում բախսվում է այն իրողությամբ, որ պարետները բավականին ինքնուրույն են իրենց գործունեության մեջ և հաշվի չեն նստում իր հետ: Այս մասին նա 1824 թ. նոյեմբերի 24-ին Ա. Երմղովին ուղղված գեկուցում Վերջինիս ուշադրությունն էր իրավիրում իր ենթակայության տակ գտնվող կառուցմերի ինքնագործունեության վրա: «Ճատ դեպքերում նկատելի է, որ նահանգներում կարևորություն ունեցող գործերի մեծ մասը իմ ենթակայության տակ գտնվող պարետների կողմից իրականացվում է առանց իմ իմացության: Ինչի պատճառները, ենթարում եմ, կամ պարետներն են իմ կողքով կատարում իրենց ներկայացումները ռազմական կառավարչին, կամ Վերջիններս են ուղղակի կարգադրություններ անում»: Այսուհետև Վ. Սադարովը, իր մտավախությունը հայտնելով, գրում է: «Հայտնվելով նման իրավիճակում, ինձ վստահված պրովինցիաների հետ կապված կարո՞ղ են վստահ լինել, որ բոլոր գործերն այստեղ ընթանում են իրենց կարգով...»: Ապա հարցում է Ա. Երմղովին, թե որևէ անկարգության դեպքում ինքը պատասխանատվության չի՝ ենթարկվի[9]:

Լինելով պատվախնդիր ու արժանապատիվ անհատականություն՝ Վ. Սադարովը, նման իրադրությունը «անկարգություն» որակելով, հրաժարական է տալիս: Իրականում այդ «անկարգությունների» պատճառը ռազմաշրջանային պետի և պարետների իրավունքներն ու պարտականությունները սահմանող փաստաթղթի բացակայությունն էր: Վ. Սադարովի հրաժարականն իրադրությունը չի շտկում: Մադարովի հրաժարականից հետո 1827 թ. օգոստոսի 27-ին Շաքի, Շիրվանի և Ղարաբաղի ռազմաշրջանային պետ է նշանակվում իշխան Ի. Աբխազովը, իսկ 1827 թ. նոյեմբերի 10-ին Ղարաբաղի պարետ է նշանակվում մայոր Կյուլի ֆոն Կյուլգենհաում[10]:

Հատկանշական է, որ Շուշիի և Շաքիի պարետներն իրենց գործունեության շրջանակները կարգավորող հրահանգներ ստանում են՝ սկսած 1828 թ.: Հրահանգները վերաբերում էին կառավարման տնտեսական, դատական, ոստիկանական և քաղաքա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ցիական ոլորտներին: Պարետների օգնականներ են նշանակվում հազարապետները և հարյուրապետները, որոնք կոչվում էին մահապային բեկեր, նայիրներ և յուլքաշիներ[1], որոնց իրավունքներն ու պարտականությունները հստակեցված չեն:

Անհրաժեշտ է նշել, որ այս ընթացքում հայ ազգային գործիչները շարունակում էին հայկական պետականության վերականգնման ծրագրեր մշակել: 1826-1828 թթ. ռուսական պարսկական պատերազմը դեռևս չէր ավարտվել, երբ 1827 թ. Խաչատրու Լազարյանը ցարական կառավարությանն է ներկայացնում «Հայկական թագավորության» ստեղծման նախագիծը: «Հայկական թագավորությունը» պետք է ընդգրկեր ռուսական տիրակալության ներքո գտնվող բոլոր հայկական պատմական տարածքները. «Ճատ մարզեր, ինչպես իին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքիի և Շամախիի մարզերը, Էջմիածնի նախագահ վանքով կազմում են Հայաստանի վաղեմի իին թագավորության ընդհանուր կորիզը և զիսավոր հիմքը»: Այն օժտված պետք է լիներ ներքին ինքնավարության իրավունքով, իսկ ռուսաց կայսրը պաշտոնական ընդունելու էր հայոց թագավորի տիտղոսը: Նախագիծի համաձայն՝ թագավորությունում ստեղծվելու էր հայկական սահմանապահ գործ և կայսերական զվարդիական հեծելավաշտ, գործելու էին հայկական օրենքները և ռուսական կայսրերի տված առանձնաշնորհումները, հայոց եկեղեցին պահպանելու էր անկախ կարգավիճակ: Իրականում «Հայկական թագավորության» ստեղծման առաջարկին հետևում է ցարական կառավարության կողմից «Հայկական մարզի ստեղծման» հրամանագիրը, որն ընդգրկում էր Երևանի և Նախիջևանի խանությունները[12]:

Անդրկովկասի կառավարման բարեփոխումների նախագերում Ղարաբաղի գավառի կառավարման հարցը քննարկման առարկա դարձավ 1828 թվականին: Նախագծի հեղինակն էր ռուս աստիճանավոր Պ. Սանկովսկին: Այն կոչվում էր «Նախագիծ Անդրկովկասի կառավարման ենթադրյալ կոմիտեի նյութերի նախապատրաստման համար» (Проект изготавления материала для предполагаемого комитета упраeлeния Закавказским краем): 1828 թ. հունվարի 1-ին նախագիծը ներկայացվում է զիսավոր շտարի պետ Ի. Դիրիշին: Նախագծով նախատեսվում էր ստեղծել 5 վարչատարածքային միավորներ՝ մարզեր՝ Վրացական, Խներեթական, Հայկական և 2 մահմեդական մարզեր: Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի գավառները պետք է մտնեն առաջին մահմեդական մարզի մեջ: Վրաստանի և Խներեթիայի համար մարզային կառավարումը նախատեսվում էր խարսխել արդեն գոյություն ունեցող կառավարման համակարգի հիմքերի վրա: Մնացած մարզերում, այդ թվում և Ղարաբաղի գավառում, նախատեսվում էր ռուսական դատավարության և գործավարության ապագա ներմուծումից հրաժարում, որովհետև դա կիանգեցներ բյուրոկրատական քաշըությունների[13]:

Անդրկովկասի կառավարման համակարգի բարեփոխման վերոնշյալ նախագիծը հաջողություն չունեցավ և, բարեբախտաբար, մնաց թղթի վրա: Ղարաբաղի դեպքում դա կնշանակեր արդեն մուտքագրված ռուսական օրենսդրությունից հրաժարում, ինչը նրան կվերադարձներ խանական վարչակարգին:

1829 թ. օգոստոսի 15-ին ռուսական կայսրության ֆինանսների նախարար Ե. Կանկովինը ցարին է ներկայացնում «Անդրկովկասային գավառների կառավարման ծիկ» մասին նախագիծ, որի համաձայն՝ պետք է վերականգնվեին Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի խանությունները, որտեղ զիսավոր կառավարումը հանձնվելու էր խանին: Խանությունների վերականգնման պատճառները չեն լուսաբանվում, քանի որ, Կանկովինի հավաստմամբ՝ «դրանք պահանջում էին մանրամասն շարադրանք»[14]: Խանությունների վերականգնման առաջարկն ուներ իր պատճառները: Խանությունների վերացումը որպես անշահավետ երևույթ էր գնահատվում 1826-1828 թթ. ռուսակառական պատերազմի ետնախորքում, քանի որ պարսկական բանակի կազմում իրենցից մեծ ուժ էին

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ներկայացնում հենց նախկին խաները, թեկերը և աղաները, ուստի ռուսական պաշտոնավարող շրջաններում տիրում էր այն մտայնությունը, թե խանությունների վերացմամբ Ռուսաստանն իր համար ծեռք էր բերել ավելորդ թշնամիներ և զրկվել ամուր հենարանից: Սակայն խանական կարգի վերականգնման առաջարկն ինքնին հետադիմական էր, քանի որ նահանջ էր տարածաշրջանում գոյություն ունեցող քաղաքական հարաբերություններից:

Նախագիծը ցարի համար ընթերցվում է 1829 թ. օգոստոսի 16-ին, սակայն դրա վերանայումը զգացվում է՝ պայմանավորված ընթացող ռուս-թուրքական պատերազմով: Յարական կառավարությունը բավարարվում է միայն նրանով, որ սենատորներ Պ. Քութայիսովին և Ե. Մեչնիկովին հանձնարարում է Անդրկովկասում անցկացնել ստուգում[15]:

1830 թ. սենատորները, անցկացնելով Ղարաբաղի գավառի ստուգումը, գեկուց են ներկայացնում՝ «Ղարաբաղի գավառի անկարգությունների և չարաշահումների մասին», որտեղ քննադատում են ռազմաժողովրդական[16] կառավարումը, պարետի և գավառային դատարանի գործունեությունը[17]:

Հավանաբար, սենատորների դիտարկման արդյունքում երևան հանված Անդրկովկասի անկազմակերպ կառավարման իրողությունը պատճառ է դառնում, որ 1830 թ. ապրիլի 24-ին ի. Պատկիչը ցարին է ներկայացնում զեկուց Անդրկովկասում միասնական քաղաքացիական, ֆինանսական և կառավարման կարգ, օրենսդրություն մտցնելու մասին՝ պատճառաբանելով, որ ժամանակավոր կառավարումը կարող է անվստահություն առաջանալ ժողովրդի մոտ: Ղարաբաղի, Ճարիի և Շիրվանի գավառների համար ի. Պատկիչը բնութագրական էր համարում կառավարման ռազմապարեւույին ծկզ: Նա առաջարկում էր տարածաշրջանը կիսել երկու նահանգների և Հայկական մարզի: Արագինը Վրացական նահանգն էր, իսկ Երկրորդը, որը պայմանականորեն Ղաղստան պետք է կոչվեր՝ կազմվելու էր 8 գավառներից՝ Ելիզավետպոլի՝ Շամշադինի ուղենասի հետ, Ղարաբաղի, Թալիշի, Ճարիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի, Դերբենդի[18]:

Նախագծով վերջ էր դրվում ազգային հիմքերի վրա վարչատարածքային բաժանումներին: Հայ ազգային գործիչներին առաջարկվում էր բավարարվել միայն Հայկական մարզով: Նախագիծը միակ դրական կողմն այն էր, որ սահմանվում էր ռուսական միաձև հայատակություն[19]: Նախագիծը քննարկվեց, սակայն սա էլ, բարերախտաբար, մնաց թղթի վրա:

Անդրկովկասի կառավարման բարեփոխումների նախագծերում Ղարաբաղի գավառի կառավարման հարցը կրկին քննարկման առարկա դարձավ 1834 թ. փետրվարի 2-ին: Անդրկովկասի կառավարման կոմիտեի քննարկմանը ներկայացված՝ ռազմական նախարար Ա. Չերնիշևի «Ռուսական կայսրության Անդրկովկասյան մարզերի կանոնադրության հիմնական դրույթների նախագիծը» ծրագրային գրության մեջ առաջարկվում էր Ռուսաստանի անդրկովկասյան շրջաններն այդուհետ կոչել Անդրկովկասյան Ռուսատան, որն էլ իր հերթին պետք է բաժանվեր քրիստոնեական և մահմեդական հատկածների՝ համապատասխանաբար Արևմտյան և Արևելյան նահանգների:

1834 թ. մարտի 12-ին քննարկումների ժամանակ ներքին գործերի նախարար Դ. Բլուդովի առաջարկությամբ Արևմտյան՝ քրիստոնեական նահանգի մեջ պետք է մտնեին Վրաստանը, Խմերեթիան, Սինգրելիան, Հայկական մարզը և Արևալյան: Ղարաբաղը մահմեդական գավառների հետ մտնելու էր Արևելյան նահանգի մեջ[20]:

1834 թ. հոկտեմբերի 16-ին կոմիտեի նիստի ժամանակ քրիստոնեական նահանգն անվանվեց Ալեքսյան, իսկ մահմեդականը՝ Կասպիական: Վերջինս կազմված էր յինելու 2 մարզերից՝ Ղաղստանի (Ղաղստան ու Ղուբա) և Կուրի, վերջինիս մեջ մտնելու էին

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Ղարաբաղի, Շաքի, Շամախի և Թալիշի գավառները: Փաստորեն, վարչատարածքային այս բաժանման հիմքում ընկած էր միայն աշխարհագրական գործոնի առկայությունը, և հերթական անգամ ունահարվելու էր Ղարաբաղի բնակչության ազգային ինքնությունը: Այս նախագիծը ևս հաջողություն չունեցավ և չիրականացվեց:

1835թ. կազմվեց «Անդրկովկասի մահմեդական գավառների կանոնադրության ընդհանուր նախագիծը», որի առաջին գիտում որոշակիացվում էր «Մահմեդական գավառներ» (պրովինցիա) անվանումը. «Անդրկովկասի մահմեդական պրովինցիաներ անվան տակ պետք է հասկանալ նախկին խանությունները՝ Ղարաբաղի, Շաքի, Շիրվանի, Թալիշի, Դերբենդի, Բարպի և Դուբայի խանություններ՝ Ղարաբաղի և Թարասարանի հետո»: Ցարիզմի վարչադարձականության մեջ տեղ գտած այս փաստն այսօր մեծապես շահարկվում է ադրբեջանական պատմագիտության կողմից, Մասնավորապես շահարկվում է ցարական կառավարության կողմից Ղարաբաղի գավառի արհեստական մոտքագրման փաստը, այսպես կոչված «մահմեդական գավառների» շարք: Իրականում անվան որոշման համար հիմք է ընդունվել ո՞չ պատմական, ո՞չ ազգագրական բաժանման, և ո՞չ էլ առավել ևս՝ էթնիկական նմանությունների սկզբունքը, այլ ուղղակի իրականացվել է աշխարհագրական բաժանման սինթեզ՝ գործահեռվելով կառավարման հարմարության սկզբունքին, ինչի արդյունքում «մահմեդական գավառների» մեջ արհեստականության մտցվել էր Ղարաբաղի գավառը: Կառավարման հարմարության միայն աշխարհագրական գործոններով առաջնորդվելու սկզբունքը, էթնիկ կենտրոնացումներից խուսափելու ցարական ավանդական քաղաքականության կրողն ու զոհը տվյալ դեպում Ղարաբաղն էր:

Նախագիծի համաձայն՝ մահմեդական գավառները պետք է բաժանվեին 2 մարզի, որոնցից առաջինի մեջ էին Ղարաբաղի, Շաքի, Շիրվանի նախկին խանությունները՝ կենտրոն ունենալով Շամախի քաղաքը: Մարզերն իրենց հերթին բաժանվելու էին շրջանների, որոնք ունենալու էին իրենց շրջանային քաղաքները: Ղարաբաղի շրջանային քաղաքն էր լիմելու Շուշի[21]:

Ստունալով «Մահմեդական գավառների կառավարման կազմակերպման» ծրագիրը՝ Կովկասի գլխավոր կառավարչական գավառները բաժանել շրջանների: 1835 թ. նոյեմբերի 9-ին Անդրկովկասի կառավարչական մահմեդական գավառների և Թալիշի խանության կառավարիչ՝ գեներալ-մայոր Կ. Ֆոն Կրաբբեինց պահանջեց ներկայացնել Ղարաբաղի բաժանման նախագիծը՝ «որդքան հնարավոր է, շրջանների փոքր թվով»: Շրջանային բաժանման հիմքում առաջարկվեց ընդունել 3 գործոն. բնակչության թիվը, «տեղական հարմարությունները» և աշխարհագրական դիրքը[22]:

1835 թ. դեկտեմբերի 12-ին Կ. ֆոն Կրաբբեն Գ. Ողենին է ուղարկում Ղարաբաղի գավառի շրջանային բաժանման պահանջված նախագիծը, որը կազմվել էր Ղարաբաղի պարեւտ փոխգննդապետ Սունապանովի կողմից[23]:

(Աղյուսակ 1)

Մահալներ	Ենթադրյալ բաժանում (հազ.)	
	շրջաններ	բնակչություն
Վարանդա	Վարանդա	25150
Ջանգեզուր	Ջանգեզուր	18547
Խաչեն	Խզիրմիդորդ	12315
Դիզակ	Շուշի	8268
Թրաբերդ	մարզային քաղաք Շուշի	7136
Ընդամենը		71416

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

1837 թ. Ղարաբաղի գավառի հարցը շոշափվեց «Ենթադրություններ Անդրկովկասի բաժանման մասին» նախագծում, որի համաձայն՝ Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի և Թալիշի շրջանները մտնելու էին Կուրի, ապա՝ Վերակազմավորված Ներքին Կուրի մարզի մեջ՝ Շուշի մարզային կենտրոնով: Ըստ նախագծի՝ Ղարաբաղի շրջանը կազմվելու էր 5 մահապետություն[24], որն ընդգրկում էր Ղարաբաղի լեռնային մասը, Վարանդան, Դիզակը, Ջիվանչիրը, Խզիրմիլորդը: Նախագիծը քննարատվեց անմշակ լինելու պատճառով և չիրականացվեց[25]:

1838 թ. մայիսի 19-ին Անդրկովկասյան կոմիտեի սենատոր Պ. Գանը Կովկասի կառավարչապետին ներկայացրեց «Անդրկովկասի կառավարման կանոնադրությունը», ինչը կառավարչապետ է. Գոլովինի կողմից վերջնականորեն հաստատվեց 1838 թ. օգոստոսին: Ծրագրի վերամշակման աշխատանքների ժամանակ գաղափար հղացավ, բացի Վրացա-Իմերեթական նահանգից և Կասպիական մարզից, կազմավորել մեկ նահանգ ևս՝ Հայկական մարզի և Ղարաբաղի գավառի միավորման ձևապարհով: Գաղափարի հեղինակն էր Չիչագովը: Մակայն 2 նահանգների համար աստիճանավորների նախատեսվող քանակի անբավարարությունը, ծմեռային հաղորդակցության դժվարությունները, կառավարման համակարգի ծախսերի մեծացումը, եղրորդ նահանգի ստեղծումը վերապահեցին կառավարությանը: Առաջ քաշված ժրագիրն այդպես էլ ընթացքավորվեց և, նժրախստարար, մնաց թղթի վրա[26]:

Վարչական բաժանման փոխարեն 1839 թ. դեկտեմբերին առաջ քաշվեց Ե. Գոլովինի նախագիծը՝ 10 միլիոն ռուբլի տրամադրելու Կովկասյան Երկրամասի բարեկարգմանը: Նախագիծ համաձայն՝ պետք է բարեկարգվեր նաև Շուշի ամրոցը[27], հաղորդակցության ուղիներ ստեղծվեին Ղարաբաղի և Նախիջևանի գավառների միջև[28]:

1838-1839 թթ. Անդրկովկասի կառավարման վերակազմակերպման հարցը շարունակում էր քննարկվել: Ի վերջո, 1840 թ. ապրիլի 10-ին Նիկոլայ 1-ինը հաստատում է Անդրկովկասի նոր վարչական բաժանման նախագիծը, որն օրենքի ուժ է ստանում[29]: Նոր վարչական բաժանման արդյունքում ամբողջ Անդրկովկասը բաժանվեց երկու խոշոր տարածքային միավորների՝ Վրացա-Իմերեթական նահանգի և Կասպիական մարզի: Ղարաբաղն այդուհետ գտնվելու էր Բաքվի, Շամախիի, Ուրբայի, Ղերենդի, Լենքորանի, Նուխիի կողքին՝ Կասպիական մարզի կազմում[30]:

1840 թ. վերջ տրվեց գավառների 18-ամյա ռազմաժողովրդական կառավարմանը, և մտցվեց քաղաքացիական կառավարում, միատիպ դատավարություն և գործակարություն[31]: Չնայած այս բարեփոխումներին՝ հաշվի չէին առնված տեղական ժողովուրդների յուրահատկությունները, ուստի քաղաքացիական կառավարման անցման առաջադիմական կողմն, այնուամենայնիվ, սահմանափակ էր:

Քաղաքացիական կառավարման առաջին գործողություններից մեկը կարելի է համարել 1843 թ. մայիսի 21-ին Կասպիական մարզի մնացած շրջանների գինանշանների, ինչպես նաև Ղարաբաղի գավառի գինանշանի հաստատումը: Այն կազմվել էր 19-րդ դարի գերմանացի գինանշանագետ Գուգոն Շտորյոլի կողմից[32]: Զինանշանի վերականգնում՝ ուսկեցօք դաշտում, կանգնած է վագրը, իսկ կողքին՝ հողից դուրս եկող երեք լուսե պյուն, ստորին մասում՝ կամաչ դաշտում պացող ծի, ինչը խորհրդանշում էր, որ գավառում բուժվում էին ամենալավ տեսակի ծիեր:

1843 թ. դեկտեմբերի 11-ին Անդրկովկասի կառավարման գլխավոր խորհրդարդ որոշում կայացրեց գավառային դատարանների, գավառային կառավարման վերակազմակերպման մասին: Այս որոշման արդյունքում Ղարաբաղում վերակազմավորվեցին դատական համակարգը և գավառային կառավարումը[33]:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

1846 թ. դեկտեմբերի 14-ին ցարական կառավարությունը Անդրկովկասը նոր վարչական բաժանման է ենթարկում: Այս անգամ ստեղծվում են 4 նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախիի և Ղերբենի: Զանգեզուրուն ու Ղարաբաղը՝ Շուշի վարչական կենտրոնով մտնում են Շամախի նահանգի[34] կազմի մեջ: 1859 թ. մայիսի 30-ին Շամախիում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի պատճառով Կովկասի փոխարքա Ա. Բարյասինսկու առաջարկով կենտրոնական նահանգային վարչությունը տեղափոխվում է Բաքու[35]: Այդպիսով 1859 թ. դեկտեմբերի 6-ին Ղարաբաղի գավառը մտնում է Վերանվանված Բաքվի նահանգի մեջ:

Մինչև 19-րդ դարի 60-ական թթ. առաջին կեսը Ղարաբաղի վարչատարածքային բաժանման վերաբերյալ ոչ մի փոփոխություն չի արձանագրվում: Այն կրկին քննարկման հարց դարձավ 1860-ական թթ. երկրորդ կեսին, երբ, հաշվի առնելով այն համապատասխան քաշը, որ Շուշիի գավառն զբաղեցնում էր մոտավորապես 20 հազ. քառ. կմ տարածք՝ 254 հազ. քննակշռյամբ, որիշվեց առանձնացնել նրա կազմում գտնվող Զանգեզորը և առանձին-առանձին մտցնել ստեղծվելիք Ելիզավետապոլի նահանգի կազմի մեջ[36]:

1867 թ. դեկտեմբերի 9-ի՝ ցարական կառավարության ընդունած նոր օրենքով Անդրկովկասը բաժանվում է 5 նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետապոլի և Բաքվի: Լեռնային Ղարաբաղը մտնում է Ելիզավետապոլի նահանգի կազմի մեջ: 1868 թ. Ելիզավետապոլի նահանգի կենտրոն ճանաչվեց Գանձակը, որն իր բնակչության թվով և քաղաքին բնորոշ մյուս գծերով գիշում էր Շուշին:

Ղարաբաղի գավառական կենտրոնների հոչակվեցին թարթառը՝ Զիվանշիրի համար, որի մեջ ներառվեցին Գյուլիստանի, Ջարերդի նախկին մելիքությունների տարածքներն ամբողջապես և Խաչենի մի մասը, Զեբրայիլը՝ համանուն գավառի համար, որի կազմում էին Դիզակի տարածքի մի մասը, և Շուշին, որի մեջ ներառվեց ամբողջ Վարանդան, Խաչենի և Դիզակի զայի մասը[37]:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ 1813-1867 թթ. ցարիզմն Անդրկովկասի վարչադարձական բարեփոխումների հարցում փնտրությունների մեջ էր, ինչով էլ բացատրվում են բազմաթիվ շիրագործված նախագծերի առկայությունը, ինչպես նաև 1840, 1846, 1859, 1867 թվականներին ցարիզմի կողմից Անդրկովկասում իրականացված վարչադարձական բաժանումները: Հատկանշական է նաև այն փաստը, որ եթե 1813-1867 թթ. ընդգրկող պատմաշրջանում ուստական արյուրներում Ղարաբաղի նախկին տեղեկությունները այս կամ այն կերպ առանձնացված են, ապա դրան հաջորդող 1867-1917 թթ. ընդգրկող ժամականաշրջանում բախվում ենք այն իրողությանը, որ, փաստություն, Ղարաբաղի գավառի նախկին տվյալները շատ հաճախ տարրապուծված են ընդհանուր Ելիզավետապոլի նահանգ վարչադարձական միավորի նախկին տեղեկություններում: Սա հերթական ապացույցն է ցարական կառավարության կայսերապետական՝ էթնիկ կենտրոնացումներից խուսափելու քաղաքականության: Փաստորեն արհեստականորեն առանձնացնելով 1867-1917 թթ.՝ որպես ինքնակալության կողմից հայտակ տիրույթներում իրականացված քաղաքականության երկրորդ փուլ՝ բախվում ենք այն իրողությանը, որ ցարիզմն արտաքին միատարրության քող էր նետել «Ելիզավետապոլի նահանգ» վարչադարձական միավորի էթնիկ ներքին բազմատարրությանը: Հետևաբար մեր գերիսնդիրն է պրատումների միջոցով առկա արյուրագիտական և պատմագիտական նյութի թնջուկում առանձնացնել սեփականն ու ազգայինը:

Հատկանշական է, որ 1867 թ. Անդրկովկասի հերթական վարչադարձական բաժանումից հետո ցարիզմի ուշադրության զինավոր ուղղություններից էր ներքին կառավարման առումով բարեկարգ երկրամաս ունենալը: Այս առումով պետք է առանձնացնել հաղորդակցության և կապի միջոցների բարեկարգման հարցը: Զկար սայլուդի և համա-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

պատասխանաբար փոստային ուղիղ հաղորդակցություն Երևանի նահանգի և Կուրի հարթավայրով դեպի Գյուղայի լիճ: Նման պայմաններում Նախիջևանից Շուշի ճանապարհը ձգվում էր Երևան-Դիլիջան-Աղստև-ք. Ելիզավետպոլ, այսինքն՝ 539 վերստ ճանապարհ, այն դեպքում, երբ Նախիջևանից Շուշի 200 վերստ էր կազմում: Շուշիի գավառը Թամագեղուրից լրիվ առանձնացված է բարձր լեռներով, այնպես որ Շուշիից Գորիս հասնելու համար պետք է հասնել Աղ-օղլան /Անարտա/ և Ջերրայիլի անցակետ. որա համար սալլուղի ճանապարհը Շուշի և Նախիջևանի համար համարվում էր շատ կարևոր»: Նախատեսվող ճանապարհի կառուցումը հնարավորություն կտար Նախիջևանի աղը հասցնելու Ելիզավետպոլի նահանգ և Կուրի հարթավայր: Այդ ճանապարհի ամենադժվարին հատվածը մշակված էր Լիսագորսկից՝ Շուշիի և Զանգեզուրի գավառների սահմանագծից մինչև Հազարի գետ՝ 27 վերստ: Մնում էր մշակել 18 վերստ՝ Լիսագորսկից մինչև Շուշի և Նախիջևանից մինչև Երևանի նահանգի Բեշենախ բնակավայրը: Այդ դեպքում կիաստատվեր ուղիղ սալլուղի հաղորդակցություն Երևանի նահանգի և Կուրի հարթավայրի միջև: Նախատեսվում էր վերամշակել հատկապես Շուշիից Կարկառ գետի հարթավայրը, որը ևս մտնում էր այդ ճանապարհի մեջ[38]:

1912 թ. կայսրը հաստատել էր Շուշի-Եվլախ երկաթուղու նախագիծը: Մարտ ամսին պետք է սկսվեին աշխատանքները: Կայսրանները հետևյալն էին Եվլախ-Սարով-Թարթառ-Ախտարա-Խաչեն-Տիգրանաբերդ-Աղդամ-Ասկերան-Բալուջա-Խանքենոյի-Շուշի: Երկաթուղին կանգ էր առնելու Ղայքալու գետի աջ ափի սարի տակ[39]:

Շուշի, Ջերրայիլի և Զևանշիրի գավառներն իրենց հերթին բաժանված էին ոստիկանական բաժանմունքների: Շուշիի գավառը կազմված էր 4 ոստիկանական բաժանմունքներից՝ Խանքենոյի, Ղազար, Աղդամ և Աղջաբերդի գյուղերում, Ջերրայիլի գավառը՝ Ջերրայիլ, Մեծ Բեղմանլու, Հորադիզ գյուղերում, Զևանշիրի գավառի Կայալի, Քոչարլի, Կասապետ գյուղերում[40]: Ոստիկանական բաժանմունքների օգնությամբ իրականացվում էր ինչպես վերահսկողությունը, այնպես էլ վիճակագրական ծարայությունը:

Ներքին բարեկարգման ծրագրի շրջանակներում շարունակվում էր հողերի սահմանագծնաման գործընթացը: Անդրկովկասի հողերի սահմանագծնաման անհրաժեշտության առաջին անգամ իր ուշադրությունն էր հրավիրել Ա. Երմոլովը: Նրա նախաձեռնությամբ նշանակվել էին նահանգային և 3 գավառական հողաշահներ: Սակայն հողերի հաշվառման գործընթացը շարունակվել է նաև հետագա տասնամյակներին: 1861 թ. Սահմանագծնաման Պալատի կողմից սկսվել էր Անդրկովկասի հողերի հաշվառման գործընթացը: Այն ուղեկցվել էր մեծ վեճերով, քանի որ մինչ այդ տիրող քառսային իրավիճակը խանգարում էր հողագործության զարգացմանը, ինչպես նաև երկրամասի տնտեսական զարգացմանը: 1889 թ. դրությամբ Անդրկովկասի հողային ֆոնդի մեծ մասը պատկանում էր արքունիքին, ուստի Պետական ունեցվածքի հաշվառման համձնաժողովը հողային հարաբերությունները կարգավորելու համար 3-4 տարվա ընթացքում մեծ աշխատանքներ իրականացրեց այդ ոլորտում[41]:

Ներքին կառավարման հարցում հաստուկ տեղ էր տրված քաղաքների ինքնակառավարման՝ քաղաքային ինքնակարություններին: Շուշիի քաղաքային դումայի նիստերում որոշվում էին տարաբնույթ հասարակական, տնտեսական, կենցաղային հարցեր[42]: Փաստաթերում Անդրկովկասի ռուսականական մնացած քաղաքների օրինակով առանձնացված էին Շուշի քաղաքի եկամուտները և ծախսերը: Շուշի քաղաքի եկամուտները՝ 1885 թ. տվյալներով կազմում էր 29513, ծախսերը՝ 25316 [43]: Ուստական կայսրության քաղաքները, ըստ բնակչանային հարկի դրույթաչափի, բաժանվում էին 5 դասի: Անդրկովկասի քաղաքները սկսվում էին 2-րդ դասից: 2-րդ դասի քաղաքներն էին Թիֆլիսը, Բաթումը, Բաքուն, 3-րդ դասը՝ Վլադիկավկազ, Եկատերինո-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

դար, Ելիզավետպող, Կարս, Քութայիս, Նովոռոսիյսկ, Ստավրոպոլ, Փոթի, Երևան, Սուխումի: 4-րդ դասի քաղաքներն էին Ալեքսանդրապոլ, Անապա, Արմավիր, Գրոզնի, Դերբենդ, Սայկոպ, Պյատիգորսկ, Շուշի և այլն: 5-րդ դասի քաղաքներն էին Ախալքալաք, Ախալցխա, Գորի, Կիզլար, Ղուբա, Լենքորան, Նովի, Շամախի, Թեղավ և այլն: Հարկաչափի որոշված էր ըստ քաղաքների ենամտային հնարավորությունների[44]:

Հատկանշական է, որ 1867-1917 թթ. խիստ փոփոխություններ կրեց նաև տեղական ինքնակառավարման քաղաքականությունը: Եթե 1813-1867 թթ. ցարական կառավարությունը տեղական ինքնակառավարման գործը կազմակերպում էր ռուս և հայ պաշտոնյաների միջոցով, ապա 1867-1917 թթ. տեղական ինքնակառավարման գիսավոր պաշտոններում նշանակվում էին առավելապես ռուս պաշտոնյաներ: Այս քաղաքականությունը հիմնավորվում է այն տրամաբանությամբ, որ ցարիզմն արդեն իսկ հաստատվել էր հայատակ տիրույթներում, դատական և քաղաքացիական ոլորտները հարմարեցվել էին Ղուսական կայսրության կառավարման համակարգին, հետևաբար ուժեղ ինքնակապական վերահսկողություն իրականացնելու համար ռուս կամ Վրացի պաշտոնյաների առկայությունը գրեթե պարտադիր էր: Հենվելով «Կովկասյան տարեցուցի» տեղեկությունների վրա՝ ներկայացնենք տեղական ինքնակառավարման կազմակերպումը 1867-1917 թթ.:

Աղյուսակ 1

Ըստ տարեթվերի	Գավառապետները՝ ըստ գավառների[45]		
	Շուշիի գավառապետ	Զերայիլի գավառապետ	Զևանշիրի գավառապետ
1867	Կ. Կրիմիցի	-	-
1870	Ա. Շամ-Գիրեյ	-	-
1872	Ա. Շամ-Գիրեյ	-	-
1878	Ի. Կոնչելի	Կ. Մաշկով	Բ. Ասրիբեկով
1882	Ի. Կոնչելի	Դ. Ասամիծե	Մ. Ռայշեմկո
1886	Վ. Ղուբրովսկի	Դ. Հասանիծե	Ի. Սոլիխանով
1891	Վ. Ղուբրովսկի	Ի. Անդրոնիկով	Կ. Միրզա-բեկ Ռաֆիբեկով
1892	Վ. Ղուբրովսկի	Ի. Անդրոնիկով	Կ. Միրզա-բեկ Ռաֆիբեկով
1893	Իշխան Աբխազով	-	Կ. Միրզա-բեկ Ռաֆիբեկով
1900	Մ. Մանղրիկին	Ի. Անդրոնիկով	Դ. Բարանովսկի
1901	-	Ա. Գարին	Մ. Ռեռուտ
1903	Վ. Եկիմով	Ա. Գարին	Ն. Ֆլեգիմսկի

Ընդհանրացնելով ուսումնասիրվող ժամանակաշրջանում ցարիզմի կողմից իրականացված՝ Ղարաբաղի վարչաքաղաքական փոփոխությունների փուլավորումը՝

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

իանգում ենք. առաջին՝ 1813-1822 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանում այն իհմնականում ծանոթության և փորձարարության բնույթ էր կրում: Ղարաբաղի խանությունում մինչև 1822 թ. պահպանվում էր խանական վարչածկը: 1822 թ. խանական կարգերը տապալվելուց հետո Ղարաբաղը վերածվում է ռուսական սովորական զավարի: Ռուսական օրենսդրությունը, ռազմական և վարչական համակարգերը, գուգակցվելով տեղում առկա ասիական բռնակալության տարրերին, մոտուր են գործում Ղարաբաղ:

Երկրորդ փուն ընդգրկում է 1822-1840 թվականները, երբ ցարիզմն ինչպես անդրկովկասյան իր բոլոր տիրույթներում, այնպես էլ Ղարաբաղում կատարում է Վարչաքաղաքական փոփոխություններ, որոնց նպատակը իշխանության կենտրոնացումը, տնտեսական յուրացումն ու վերածումն է գաղութի:

Երրորդ՝ 19-րդ դարի 40-60-ական թթ. ընդգրկող փունը բնութագրվում է Վարչաքաղաքական նոր փոփոխություններով, որոնց արդյունքում Ղարաբաղում հաստատվում է կառավարման նոր՝ քաղաքացիական կարգ, կարգավորվում է դատական համակարգը:

Գնահատելով ցարական կառավարության վարչաքաղաքական նախագծերի և որոշումների ինչպես նաև հետագայում ռուսականական տարածքների, այդ թվում նաև Ղարաբաղում տարկող քաղաքականության էությունը՝ եզրահանգում ենք.

ա) ցարիզմը հավատարիմ էր մնացել էթնիկ ապակենտրոնացման իր քաղաքականությանը. այն ցայտուն կերպով արտահայտվել էր Ղարաբաղում, որտեղ շարունակում էր ապրել անկախ պետականության կերտման հոլովակ:

բ) նախագծերում առաջ քաշված եղակի առաջարկները Ղարաբաղը և Հայկական մարզը մեկ վարչաքաղաքական միավորի մեջ միավորելու մասին այդպես էլ մնում էին թոթի վրա՝ պատճառաբանվելով սուկ աշխարհագրական նկատառումներով: Փաստութեն, ցարական իշխանությունները ենթով իրենց ներ շահախնորդիր քաղաքականությունից, Ղարաբաղը և Հայկական մարզը չմիավորեցին մեկ վարչական միավորի մեջ:

գ) «Ելիզավետպոլի նահանգ» Վարչաքաղաքական միավորի կազմում Ղարաբաղի զավարը ներքին վարչաքաղաքական բաժննաման ենթարկումը, եթե կենտրոնի կողմից երկրամասի կառավարումը դյուրացնելու նպատակ ուներ, մյուս կողմից՝ այն մանրատման և տարրապուծման հետևանքներ ունեցավ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քաղդասարյան Ն., Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ. Եր., 2015, էջ 9; Բագդասարյ Ն., Կարաբախ և административных проектах реформ и постановлений Российской империи в 1813 – 1859 гг., "Россия и армяне Нагорного Карабаха в прошлом и настоящем", Южнороссийское обозрение, Центр системных региональных исследований и прогнозирования ИППК ЮФУ и ИСПИ РАН, Вып. 67, Москва-Ростов-на-Дону-Степанакерт, 2011, стр.100-110.
2. Ղարաբաղի խանությունը ընդգրկել է Կուր-Արաքսյան Միջագետքի հարավային և հարավ-արևելյան հատվածը, Գանձակի և Շաքի խանություններից հարավ և գրադեցրել է 13 հազ. քառ. վերստ: Այս մասին տես՝ Իվանենկո Բ., Գражданское управление Закавказьем, Тифlis, 1901, стр.146.
3. Հայ ժողովորի պատմություն, հ. 5, Եր., 1974, էջ 15, Հովհաննիսյան Լ., «Ղարաբաղի խանություն», «Ղարաբաղ», «Լեռնային Ղարաբաղ» անվանումների հարաբե-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԻՐԱԾՈՒ 2016

- րությունը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 113:
4. Տுնյան Յ., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., Ер., 2006, стр. 120.
 5. Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 94:
 6. Տуնյան Յ., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., Ер., 2003, стр. 27.
 7. Նույն տեղում, էջ 27; Ерошкин Н., История государственных учреждений дореволюционной России, М., 1983, стр. 189.
 8. Տуնյան Յ., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., стр. 27.
 9. Տуնյան Յ., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., стр. 120.
 10. ՀԱԱ, §. 319, գ. 1, գ. 1, թ. 1:
 11. Տуնյան Յ., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., стр. 28.
 12. Հայոց պատմություն, հ.3, գիրք առաջին, նոր ժամանակաշրջան (XVII դարի Երկրորդ կես – XIX դարի վերջ), Եր., 2010, էջ 261-262:
 13. Տуնյան Յ., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., стр. 43.
 14. Նույն տեղում, էջ 44-45:
 15. Акты, собранные Кавказской Археографической Комиссией (այսուհետև՝ АКАԿ), т. VII, док. 47, стр. 35.
 16. Ցարիզմի կողմից ռազմաժողովրդական կառավարում էր անվանվում պարետային կառավարումը:
 17. Տуնյան Յ., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., Ер., 2006, стр. 63.
 18. АКАԿ, т. VII, док. 47, стр. 35-37, Документы и материалы по истории армянского народа, социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), под ред. Н. А. Тавакаляна, Ер., 1993, стр. 55-58.
 19. Տуնյան Յ., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., стр. 68.
 20. Տуնյան Յ., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., стр. 51.
 21. Տуնյան Յ., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., стр. 146-147.
 22. Նույն տեղում, էջ 148:
 23. Նույն տեղում, էջ 151:
 24. Վարչաքարագրական բաժանման համար հիմք էր ընդունել Ղարաբաղի շրջանային բաժանման 1835 թ. նախագիծը:
 25. Տуնյան Յ., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть третья, 1836-1844 гг., Ер., 2006, стр. 25.
 26. Տуնյան Յ., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., стр. 63.
 27. Շուշիի հատակագիծը բարեկարգելու մասին ցարական իշխանությունների նախագծերի մասին տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Եր., 1980, էջ 131, 155: Պետրոսյան Ս., Շուշիի բաղա-

ՄԵՄՐՈՊ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՏԱՄԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2016

- քաշինական զարգացման և ռեաբիլիտացիայի խնդիրները, Ասենախոսության սեղմագիր, Եր., 2006, էջ 12:
28. АКАК, т. IX, Тифлис, 1884, док. 20, стр.17-19.
 29. Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., стр. 66.
 30. Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, стр. 86-87, Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XX в., Ер., 2002, стр. 99, Тунян В., Восточная Армения в составе России, Ер., 1989, стр. 43.
 31. Тунян В., Карабахский конфликт: историко-геополитический аспект, Ер.,1999, стр. 6.
 32. <http://www.hrono.ru/heraldicum/russia/lost/towns/shusha.htm>. ինչպես նաև Դեմոյան Հ., Հայկական գինանշաններ, դրոշներ, պետական պարզեցներ, Եր., 2008, էջ 63:
 33. Բաղդասարյան Ն., նշվ. աշխ. էջ 104:
 34. “Кавказский календарь” на 1849 г., Тифлис, 1848, стр. 37-40. Саркисян М., Из истории градостроительства Шуши, Ер., 1996, стр. 15.
 35. «Մեղու Հայաստանի», թիվ 316, 1860, էջ 17: Ստեփանյան Գ., Բարձի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին /պատմաժողովրդագրական ուսումնասիրություն/, Եր., 2010, էջ 52:
 36. Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е.и.в. князем Михаилом Николаевичем с декабря 1862-6 декабря 1872, Тифлис, 1873, стр. 50. Մեկ այլ աղբյուրի համաձյան այդ պահին Շուշիի գավառի տարածքը կազմում էր 19866,4 քառ. Վերստ, իսկ բնակչության թիվը՝ 253314, տե՛ս “Кавказский календарь” на 1868 г., Тифлис, 1867.
 37. Բալայան Վ., Արցախի վարչաքարական կարգը (1813-1917 թթ.), Պատմագիտական ուսումնասիրություններ, Սահմանադրություն, 2003, էջ 5: Рябцев В., Сафарян С., “Карабахский узел”: этнонациональный конфликт в аспекте региональной геополитики, Ростов на-Дону, 1996, стр. 14.
 38. Сеть Закавказских дорог утвержденная великим Князем наместником 1 июля 1871 г., Кавказский календарь на 1872, Тифлис, 1871, стр. 25.
 39. Ղարաբաղ, 1912, թիվ 14:
 40. Кавказский календарь на 1889 год, Тифлис, 1888, стр. 166.
 41. Кавказский календарь на 1890 год, Тифлис, 1889, стр. 33-35.
 42. Ղարաբաղ, 1912, թիվ 15:
 43. Таблица доходов, расходов, долгов и недоимок главнейших городов Кавказа 1885 г. / по данным отчетов/, Кавказский календарь на 1887 год, Тифлис, 1886, стр. 181-183.
 44. Кавказский календарь на 1901 год, Тифлис, 1900, стр. 34.
 45. Кавказский календарь на 1871, Тифлис, 1870, стр. 47-48, Кавказский календарь на 1873, Тифлис, 1872, стр. 49, Кавказский календарь на 1873, Тифлис, 1872, стр. 25, Кавказский календарь на 1873, Тифлис, 1872. стр. 25, Кавказский календарь на 1879, Тифлис, 1878, стр. 36, Кавказский календарь на 1883 год, Тифлис, 1882, стр. 50, Кавказский календарь на 1887 год, Тифлис, 1886, стр.43, Кавказский календарь на 1892 год, Тифлис, 1891, стр.116, Кавказский календарь на 1893 год, Тифлис, 1892, стр. 669, Кавказский календарь на 1894 год, Тифлис, 1893, стр. 428, Кавказский календарь на 1902 год, Тифлис, 1901, стр. 551, Кавказский календарь на 1904 год, Тифлис, 1903. стр. 441.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ղարաբաղը՝ Ոուսական կայսրության անդրկովկասյան վարչաքաղաքականության համատեքստում 1813-1917 թթ.
Նելլի Բաղդասարյան

1813-1917 թթ. Ղարաբաղը գտնվում էր ռուսական կայսրության տիրապետության տակ: Ղարաբաղի նկատմամբ իրականացված Վարչաքաղաքականության լուսաբանումը կարևոր է՝ հետզույկիստանյան ժամանակաշրջանը գնահատելու և պատմականությի հմաստով: Հոդվածում ներկայացվել է Ռուսաստանի կողմից իրականացված Վարչաքաղաքականությունը, առանձնացվել են հետևյալ փուլերը. 1813-1822 թթ.՝ փորձարարության 1822-1840 թթ. իշխանության կենտրոնացման, 19-րդ դարի 40-60-ական թթ. քաղաքացիական կարգի մուտքագրման, 1867-1917 թթ. երկրանասի վերջնական տարրալուծման պատմաշրջանները:

РЕЗЮМЕ

**Карабах в контексте административной политики Российской империи на Закавказье
в 1813 – 1917 гг.**
Нелли Багдасарян

Ключевые слова: Карабах, Гюлистанский договор, Шуши, А.Ермолов, В.Мадатов, Южный Кавказ, Каспийская область, Шемахинская губерния, Бакинская губерния, Елизаветпольская губерния, административная политика.

В 1813 – 1917 гг. Карабах находился под господством Российской империи. Освещение административной политики, проводимой в Карабахе, является важным при оценивании послегюлистанского периода и с точки зрения заповедей истории. В статье представлена административная политика, проводимая Россией, выделены следующие этапы: предварительный этап – 1813-1822 гг., этап централизации власти – 1822-1840 гг., этап введения гражданского строя – 40-60 гг. XIX в., этап окончательного разложения области – 1867-1917 гг.

SUMMARY

**Karabakh within the context of the Russian Empire administrative policy
in the South Caucasus in 1813-1917**
Nelly Baghdasaryan

Keywords: Karabakh, Gulistan treaty, Shoushi, A.Ermolov, V.Madatov, South Caucasus, Caspian region, Shemakha province, Baku province, Elizavetpol province, administrative policy.

During 1813-1917 Karabakh was under the domination of the Russian Empire. Coverage of the administrative policy held in Karabakh is essential while estimating the after-Gulistan period from the viewpoint of historical commandments. The article presents the administrative policy pursued by Russia. The following stages are singled out: the preliminary stage - 1813-1822, the stage of power centralization - 1822-1840, the stage of civil order initiation - 1840-1860, the stage of the final decomposition of the region - 1867-1917.